Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2020 թվականի փետրվարի 7-ին ստորագրված «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

(Գործառնություն 50310)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(ՄԵՂՐԻԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԻ ԾՐԱԳԻՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ

միջև

2020 թվականի փետրվարի 7

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ I. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 6

Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը 6

Բաժին 1.02. Սահմանումներ 7

Բաժին 1.03. Մեկնաբանությունը 12

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 12

Բաժին 2.01. Գումարը և արժույթը 12

Բաժին 2.02. Վարկի մյուս ֆինանսական պայմանները 12

Բաժին 2.03. Մասհանումները և Հատուկ հաշիվը (վարկ) 14

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ 15

Բաժին 3.01. Ծրագրի մյուս հաստատուն վավերապայմանները 15

Բաժին 3.02. Ծրագրի իրականացման գրաֆիկը 15

Բաժին 3.03. Գնումները 16

Բաժին 3.04. Բնապահպանական և սոցիալական համապատասխանության վավերապայմանները 17

Բաժին 3.05. Խորհրդատուները 19

Բաժին 3.06. Ծրագրի հատուկ վավերապայմանները 19

Բաժին 3.07 Հաշվետվությունների հաճախականության և ներկայացման մասով պահանջները 21

ՀՈԴՎԱԾ IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ 27

Բաժին 4.01. Ֆինանսական փաստաթղթերն ու հաշվետվությունները 27

ՀՈԴՎԱԾ V. ԿԱՍԵՑՈՒՄԸ, ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՈՒՄԸ, ՉԵՂԱՐԿՈՒՄԸ 28

Բաժին 5.01. Կասեցումը 29

Բաժին 5.02. Վաղաժամկետ մարումը 29

Բաժին 5.03. Չեղարկումը 30

ՀՈԴՎԱԾ VI. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ 30

Բաժին 6.01. Ուժի մեջ մտնելու համար նախապայմանները 30

Բաժին 6.02. Իրավաբանական եզրակացությունը 30

Բաժին 6.03. Ուժի մեջ չմտնելու հետևանքով դադարելը 31

ՀՈԴՎԱԾ VII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 31

Բաժին 7.01. Ծանուցումները 31

Բաժին 7.02. Փոփոխությունները 31

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 36

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԸ 37

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎԸ (ՎԱՐԿ) 38

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 43

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջև 2020 թվականի փետրվարի 7-ին ստորագրված ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՆԱԽԱԲԱՆ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը հիմնադրվել է այնպիսի հատուկ ծրագրերին ֆինանսավորում տրամադրելու նպատակով, որոնք ուղղված են խրախուսելու անցումը դեպի բաց շուկայական միտվածություն ունեցող տնտեսություններ և խթանելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները որոշ երկրներում, որոնք ստանձնել են հանձնառություն կիրառելու, ինչպես նաև կիրառում են բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքները,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Վարկառուն նախատեսում է իրականացնել Ծրագիրը, ինչպես նկարագրված է 1-ին հավելվածում, որը մշակված է՝ օժանդակելու Վարկառուին՝ Հայաստանի Հանրապետության հարավային սահմանի երկայնքով՝ Մեղրի քաղաքի մոտակայքում, սահմանային անցակետի (ՍԱ) արդիականացմանը և ընդլայնմանը (Ծրագիր),

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Վարկառուն հայցել է Բանկի աջակցությունը՝ Ծրագրի մի մասը ֆինանսավորելու հարցում,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը համաձայնվել է հասանելի դարձնել ԵՄ Հարևանության ներդրումային պլատֆորմի կողմից տրամադրվող տեխնիկական համագործակցության դրամաշնորհային միջոցները՝ ֆինանսավորելու Ծրագրի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) խորհրդատուի և

Ծրագրի համակարգման մասով խորհրդատուի նշանակումը՝ 700 000 եվրո գումարի չափով, ինչը ենթակա է կարգավորման Բանկի և Վարկառուի միջև կնքվող դրամաշնորհային համաձայնագրով նախատեսված պայմաններով (այսուհետ՝ ԵՄ ՀՆՊ ՏՀ դրամաշնորհային համաձայնագիր),

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը համաձայնվել է հասանելի դարձնել ԵՄ Հարևանության ներդրումային պլատֆորմի կողմից տրամադրվող ներդրումային դրամաշնորհային միջոցները՝ աջակցելու Ծրագրի ֆինանսավորմանը 10 520 000 եվրո գումարի չափով, ինչը ենթակա է կարգավորման Բանկի և Վարկառուի միջև կնքվող դրամաշնորհային համաձայնագրով նախատեսված պայմաններով (այսուհետ՝ ԵՄ ՀՆՊ ներդրումային դրամաշնորհային համաձայնագիր), և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը համաձայնվել է, ի թիվս այլնի, վերոգրյալի հիման վրա Վարկառուին տրամադրել վարկ՝ 10 626 263 եվրո գումարի չափով, ինչը ենթակա է կարգավորման սույն Համաձայնագրում սահմանված կամ դրանում նշված պայմաններով,

Կողմերը համաձայնում են հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը

Բանկի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները սույնով ներառվում ու դառնում են կիրառելի սույն Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ՝ այնպես, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին սույն Համաձայնագրում, այնուամենայնիվ, ենթարկվելով հետևյալ փոփոխությունների (այդ դրույթները՝ նշված փոփոխություններով, այսուհետ՝ Ստանդարտ պայմաններ).

ա) Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի «բ» կետի i ենթակետը սույն Համաձայնագրի նպատակներով պետք է փոփոխվի հետևյալ բովանդակությամբ.

«i) Մասհանում կատարելու նպատակով մասհանման հայտը Բանկին պետք է ներկայացվի Վարկառուի լիազորված ներկայացուցչի կամ Վարկառուի լիազորված ներկայացուցչի կողմից նշված անձի կողմից: Յուրաքանչյուր մասհանման հայտ պետք է լինի ՎԶԵԲ Մասհանումների ձեռնարկին համապատասխան և դրանում սահմանված ձևով (ենթակա է բացառությունների կիրառման և այլ փոփոխությունների՝ Բանկի համաձայնությամբ) և ներկայացվի Բանկին՝ մասհանման նախատեսվող օրվանից առնվազն տասնհինգ (15) բանկային օր առաջ: Յուրաքանչյուր մասհանման հայտ պետք է, ըստ էության, ընդունելի լինի Բանկի համար և պետք է ուղեկցվի ձևով և բովանդակությամբ բավարար՝ Բանկի կողմից ընդունելի փաստաթղթերով և ապացույցներով այն մասին, որ Վարկառուն մասհանման գումարի նկատմամբ իրավունքներ ունի, և որ այն օգտագործվելու է բացառապես Վարկային համաձայնագրում նշված

նպատակների համար:»:

Բաժին 1.02. Սահմանումներ

Անկախ այն հանգամանքից, թե սույն Համաձայնագրի ո՛ր հատվածում են օգտագործվում (ներառյալ Նախաբանը և հավելվածները), եթե այլ բան նախատեսված չէ, կամ համատեքստով այլ բան չի պահանջվում, Նախաբանում սահմանված եզրույթներն ունեն իրենց՝ Նախաբանում տրված համապատասխան նշանակությունը, Ստանդարտ պայմաններում սահմանված եզրույթներն ունեն իրենց՝ Ստանդարտ պայմաններում տրված համապատասխան նշանակությունը, իսկ հետևյալ եզրույթներն ունեն հետևյալ նշանակությունը.

«թույլտվություն»	նշանակում է՝ որևէ պետական կառավարման մարմնից կողմից կամ դրա հետ տրված ցանկացած համաձայնություն, գրանցում, ներկայացում, պայմանավորվածություն, նոտարական հաստատում, հավաստագիր, արտոնագիր, հաստատում, թույլտվություն, լիազորություններ կամ դրանցից ազատում՝ անկախ այն հանգամանքից, թե տրվել է կամ մերժվել է ուղղակի գործողությամբ կամ համարվում է տրված կամ մերժված՝ սահմանված ժամկետում գործողություններ չկատարելու պատճառով, թե՝ ոչ, ինչպես նաև բոլոր կորպորատիվ, պարտատերերի և բաժնետերերի հավաստումներն ու համաձայնությունները.

«Վարկառուի լիազորված ներկայացուցիչ»	նշանակում է՝ Վարկառուի ֆինանսների նախարար
«ClientNet համակարգ»	նշանակում է՝ Բանկի առցանց պորտալ, որը նախատեսված է Բանկի և իր հաճախորդների միջև փաստաթղթերի և տեղեկությունների փոխանցման համար, ինչպես նաև ցանկացած փոխարինող կայք, որի միջոցով Բանկը ժամանակ առ ժամանակ կարող է ծանուցել Վարկառուին.
«Կատարողականի մասով սահմանված պահանջներ»	նշանակում է՝ Կատարողականի մասով 1-ից 8-րդ և 10-րդ պահանջներ (կամ համատեքստով պահանջվելու դեպքում՝ Կատարողականի մասով այդպիսի պահանջներից ցանկացածը), որը թվագրված է 2014 թվականի մայիսով և առնչվում է Բանկի 2014 թվականի մայիսի՝ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը.
«Կատարման ապահովման մասով քաղաքականություն և ընթացակարգեր»	նշանակում է՝ Բանկի՝ 2017 թվականի հոկտեմբերի 4-ի՝ Կատարման ապահովման մասով քաղաքականություն ու ընթացակարգեր.
«Բնապահպանական և սոցիալական գործողությունների	նշանակում է՝ բնապահպանական և սոցիալական բացասական հետևանքների

ծրագիր»	մեղմման և բարելավման միջոցառումների ծրագիր, որի պատճենը կցված է սույն Համաձայնագրին՝ որպես 4-րդ հավելված՝ հաշվի առնելով, որ այդ ծրագիրը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ՝ 3.04 բաժնի «գ» կետին համապատասխան.
«բնապահպանական և սոցիալական օրենք»	նշանակում է՝ ցանկացած կիրառելի օրենք կամ կարգավորում, որն առնչվում է հետևյալին. ա) շրջակա միջավայրի աղտոտում կամ պահպանում, ներառյալ՝ որոշումների կայացման գործընթացում մասնակցությանն առնչվող օրենքներն ու կարգավորումները, բ) աշխատանքի և զբաղվածության պայմաններ, գ) աշխատավայրում առողջություն ու անվտանգություն, դ) հանրային առողջություն, անվտանգություն և ապահովություն, ե) բնիկ ազգաբնակչություն, զ) մշակութային ժառանգություն, կամ

	է) մարդկանց տարաբնակեցում կամ տնտեսական տեղաշարժ.
«բնապահպանական և սոցիալական հարց»	նշանակում է՝ ցանկացած հարց, որը ենթակա է կարգավորման ցանկացած բնապահպանական և սոցիալական օրենքով, Կատարողականի մասով սահմանված ցանկացած պահանջով կամ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրով.
«ֆիսկալ տարի»	նշանակում է՝ Վարկառուի ֆիսկալ տարի, որը սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից.
«պետական կառավարման մարմին»	նշանակում է՝ Վարկառուի Կառավարություն կամ դրա ցանկացած քաղաքական միավոր՝ անկախ այն հանգամանքից՝ այն պետական, տարածքային, թե տեղական միավոր է, ինչպես նաև ցանկացած գործակալություն, մարմին, մասնաճյուղ, ստորաբաժանում, կարգավորող մարմին, դատարան, կենտրոնական բանկ կամ այլ մարմին, որն իրականացնում է գործադիր, օրենսդիր, դատական, հարկային, կարգավորիչ կամ վարչական լիազորություններ կամ գործառույթներ, որոնք ներհատուկ են

	կառավարությանը կամ կապված են դրա կամ դրա ցանկացած միավորի (այդ թվում ցանկացած վերազգային մարմնի) հետ, ինչպես նաև վերոնշյալներից յուրաքանչյուրի պաշտոնատար անձինք, գործակալներն ու ներկայացուցիչները.
«դրամաշնորհային համաձայնագրեր»	նշանակում է՝ ԵՄ ՀՆՊ ներդրումային դրամաշնորհային համաձայնագիր և ԵՄ ՀՆՊ ՏՀ դրամաշնորհային համաձայնագիր.
«ԾԻԳ»	նշանակում է՝ 3.02 բաժնում նշված՝ Ծրագրի իրականացման գրասենյակ.
«ԾԻԳ խորհրդատու»	նշանակում է՝ այն խորհրդատուն կամ խորհրդատուները, որը (որոնք) նշանակվել է (են) 3.05 բաժնին համապատասխան՝ ԾԻԳ-ին աջակցելու համար.
«Ծրագրի համակարգման մասով խորհրդատու»	նշանակում է՝ այն խորհրդատուն, որը նշանակվել է 3.05 բաժնին համապատասխան՝ Ծրագրի համակարգման հարցում աջակցելու համար.
«Ծրագրի իրականացման մարմին»	նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե.
«Հատուկ հաշիվ»	նշանակում է՝ Հատուկ հաշիվ (ներդրումային դրամաշնորհ) և/կամ

	Հատուկ հաշիվ (վարկ), ինչպես համատեքստը պահանջում է.
«Հատուկ հաշիվ (ներդրումային դրամաշնորհ)»	ունի ԵՄ ՀՆՊ ներդրումային դրամաշնորհային համաձայնագրում այդ տերմինին տրված նշանակությունը.
«Հատուկ հաշիվ (վարկ)»	նշանակում է՝ 2.03 բաժնում և 3-րդ հավելվածում նշված հատուկ դեպոզիտային հաշիվ:

Բաժին 1.03. Մեկնաբանությունը

Սույն Համաձայնագրում համապատասխան հոդվածին, բաժնին կամ հավելվածին որևէ հղում պետք է ընկալվի որպես հղում սույն Համաձայնագրի՝ այդ կոնկրետ հոդվածին, բաժնին կամ հավելվածին, եթե սույն Համաձայնագրով այլ բան սահմանված չէ:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաժին 2.01. Գումարը և արժույթը

Բանկը համաձայնում է սույն Համաձայնագրում սահմանված պայմաններով և կարգով Վարկառուին տրամադրել 10, 626. 263 եվրո գումար:

Բաժին 2.02. Վարկի մյուս ֆինանսական պայմանները

ա) Մասհանման նվազագույն գումարի չափը 50 000 եվրո է:

բ) Կանխավճարի նվազագույն գումարի չափը 500 000 եվրո է:

գ) Չեղարկման նվազագույն գումարի չափը 500 000 եվրո է:

դ) Տոկոսի վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ը և հոկտեմբերի 16-ը:

ե) 1) Վարկառուն վարկը վճարում է 24 հավասարաչափ (կամ որքան հնարավոր է՝ հավասարաչափ) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին, ընդ որում, վարկի առաջին վճարման ամսաթիվն է 2023 թվականի ապրիլի 16-ը, իսկ վարկի վերջին վճարման ամսաթիվն է 2034 թվականի հոկտեմբերի 16-ը:

2) Չհակասելով վերոնշյալին՝ այն դեպքում, երբ՝ (i) Վարկառուն մինչև սույն 2.02. բաժնի «ե» կետով սահմանված՝ վարկի առաջին վճարման ամսաթիվը չի մասհանում վարկի ամբողջ գումարը, և (ii) 2.02. բաժնի ներքոնշյալ «զ» կետով սահմանված վերջին հասանելիության ժամկետը (կարող է երկարաձգվել Բանկի կողմից) վարկի առաջին վճարման ամսաթվից ավելի ուշ ընկած ամսաթիվ է, վարկի առաջին վճարման ամսաթվին կամ դրանից հետո կատարված յուրաքանչյուր մասհանման գումար պետք է բաշխվի վճարման համար հավասարաչափ մասնաբաժիններով՝ վարկի մարման տարբեր ամսաթվերի միջև, որոնք այդ մասհանումից հետո ընկած ժամանակահատվածում են (անհրաժեշտության դեպքում՝ Բանկի հետ ճշտելով նշված ձևով բաշխված գումարները, որպեսզի յուրաքանչյուր դեպքում ստացվեն ամբողջական թվերը): Բանկը ժամանակ առ ժամանակ ծանուցում է Վարկառուին այդ բաշխումների մասին:

զ) Վերջին հասանելիության ժամկետը 2014 թվականի հունվարի 31-ն է կամ այլ ավելի ուշ ժամկետ, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է սահմանել և ծանուցել Վարկառուին: Եթե հասանելի գումարը կամ դրա ցանկացած մաս ֆիքսված տոկոսադրույքով է, և Բանկը երկարաձգում է վերջին

հասանելիության ժամկետը, ապա Վարկառուն պետք է անհապաղ Բանկին վճարի պայմանների փոփոխության հետևանքով առաջացած ծախսերի գումարը՝ Բանկի կողմից այդ պահի դրությամբ Վարկառուին ուղարկված գրավոր ծանուցման համաձայն։

է) Պարտավճարի չափը տարեկան 0.5% է։

ը) Վարկը ենթակա է վճարման լողացող տոկոսադրույքով։ Չհակասելով վերոնշյալին՝ Վարկառուն կարող է ինչպես վարկի ամբողջ գումարի, այնպես էլ դրա ցանկացած մասնաբաժնի համար, որն այդ պահի դրությամբ վճարված չէ, որպես լողացող տոկոսադրույքի այլընտրանք ընտրել վճարման համար ֆիքսված տոկոսադրույքը՝ վարկի այդ մասնաբաժնի համար՝ Ստանդարտ պայմանների 3.04 բաժնի «գ» կետին համապատասխան։

Բաժին 2.03. Մասհանումները և Հատուկ հաշիվը (վարկ)

ա) Հասանելի գումարը ժամանակ առ ժամանակ կարող է 2-րդ հավելվածի դրույթներին համապատասխան մասհանվել՝ ֆինանսավորելու համար՝ 1) Ծրագրի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ողջամիտ արժեքների առնչությամբ կատարված (կամ Բանկի համաձայնությամբ կատարվելիք) ծախսերը և 2) միանվագ կոմիսիոն վճարը։

բ) Ծրագրի նպատակներով և եթե Բանկը դիմել է, Վարկառուն պետք է ապահովի, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը Հայաստանի Հանրապետության գանձապետարանում բացի և վարի հատուկ դեպոզիտային հաշիվ՝ Բանկի համար ընդունելի պայմաններով և կարգով՝ ներառյալ համապատասխան պաշտպանությունը հաշվանցումից, առգրավումից և արգելանք դնելուց։

Բանկը կարող է պահանջել, որ Վարկառուն միջոցներ մուտքագրի Հատուկ հաշվին (վարկ) և ուղղակի վճարումներ կատարի դրանից (կապալառու(ներ)ին և/կամ խորհրդատու(ներ)ին ուղղակի վճարումներ կատարելու նպատակով), որի դեպքում այդ մասհանումները պետք է կատարվեն 3-րդ հավելվածի դրույթներին համապատասխան: Եթե պահանջվի, որ Վարկառուն միջոցներ մուտքագրի Հատուկ հաշվին (վարկ) և ուղղակի վճարումներ կատարի դրանից, ապա 3-րդ հավելվածի դրույթները կգերակայեն ՎԶԵԲ Մասհանումների ձեռնարկի հետ ցանկացած անհամապատասխանության դեպքում:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Բաժին 3.01. Ծրագրի մյուս հաստատուն վավերապայմանները

Ի լրումն Ստանդարտ պայմանների IV հոդվածում սահմանված ընդհանուր պարտավորությունների՝ Վարկառուն, եթե Բանկն այլ բան չի նախատեսում՝

ա) ձեռնարկում է Ծրագիրն ավարտելու համար համապատասխան միջոցներ տրամադրելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները.

բ) ձեռք է բերում, պահպանում, թարմացնում և համապատասխանեցնում բոլոր անհրաժեշտ արտոնագրերը, հաստատումներն ու գրանցումները, և

գ) ապահովում է, որ Ծրագրի իրականացման մարմնի համապատասխան ստորաբաժանում(ներ)ը պատշաճ բարեխղճությամբ և արդյունավետորեն վերահսկի Ծրագրի ընդհանուր իրականացումն ու կառավարումը:

Բաժին 3.02. Ծրագրի իրականացման գրասենյակը

Եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ, Վարկառուն, Ծրագրի իրականացման բոլոր ասպեկտները համակարգելու, կառավարելու, մոնիտորինգի ենթարկելու և

գնահատելու նպատակով, ներառյալ՝ Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը, ապահովում է, որ հիմնադրվի և Ծրագրի կատարման ամբողջ ժամանակահատվածում գործի ծրագրի իրականացման գրասենյակ (կամ այլ թիմի կառուցվածք)՝ համապատասխան ռեսուրսներով և որակավորված ցանկալի անձնակազմով, Բանկի համար ընդունելի պայմաններով:

Բաժին 3.03. Գնումները

Ստանդարտ պայմանների 4.03 բաժնի նպատակներով՝ Ծրագրի համար պահանջվող և վարկից ստացված միջոցներից ֆինանսավորվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը, եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ, կարգավորվում է հետևյալ դրույթներով.

ա) ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների (բացի խորհրդատվական ծառայություններից, որոնք ներառված են 3.03 բաժնի «գ» կետում) գնումը պետք է իրականացվի բաց մրցույթների միջոցով.

բ) 3.03 բաժնի «ա» կետի նպատակներով բաց մրցույթի ընթացակարգերը սահմանված են ՎԶԵԲ-ի Գնումների կանոնակարգի III բաժնի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներում.

գ) Ծրագրի կատարմանն աջակցելու համար Վարկառուի կողմից վարձվող խորհրդատուները պետք է ընտրվեն ՎԶԵԲ-ի Գնումների կանոնակարգի III բաժնի 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգերին համապատասխան.

դ) բոլոր պայմանագրերը ենթակա են ՎԶԵԲ-ի Գնումների կանոնակարգով սահմանված ընթացակարգերով իրականացման և Բանկի նախնական ուսումնասիրման.

ե) ցանկացած պայմանագրի դեպքում, որի առնչությամբ վճարումը պետք է կատարվի Հատուկ հաշվից, գնումների ընթացակարգերը պետք է

իրականացվեն այնպես, որ ապահովվի 3.03. բաժնի «դ» կետով սահմանված՝ ուսումնասիրման մասով պահանջների բավարարումը՝ մինչև Հատուկ հաշվից այդ պայմանագրի առնչությամբ կատարվող առաջին վճարումը։

Բաժին 3.04. Բնապահպանական և սոցիալական համապատասխանության վավերապայմանները

Չսահմանափակելով Ստանդարտ պայմանների 4.02 բաժնի «ա» կետի, 4.04 բաժնի «ա» կետի iii ենթակետի և 5.02 բաժնի «գ» կետի iii ենթակետի ընդհանրական բնույթը, և քանի դեռ Բանկի հետ այլ համաձայնություն չկա՝

ա) Վարկառուն Ծրագիրն իրականացնում է և ապահովում է, որ Ծրագրի իրականացման մարմինը և ցանկացած կապալառու այն իրականացնի Կատարողականի մասով սահմանված պահանջներին, բնապահպանական և սոցիալական օրենքներին և այլ համապատասխան բնապահպանական թույլտվություններին, արտոնագրերին, հավաստագրերին և հաստատումներին համապատասխան.

բ) չսահմանափակելով վերոգրյալը՝ Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի իրականացման մարմինը պատշաճ բարեխղճությամբ իրականացնի և պահպանի Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի դրույթները, ինչպես նաև մոնիտորինգի ենթարկի այդ գործողությունների ծրագրի իրականացումը՝ այդ ծրագրով սահմանված՝ մոնիտորինգի մասով դրույթներին համապատասխան.

գ) Վարկառուն և Բանկը ժամանակ առ ժամանակ կարող են համաձայնվել փոփոխել Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը՝ արձագանքելով Ծրագրի կամ Վարկառուի կամ Ծրագրի իրականացման

մարմնի հետ կապված հանգամանքների փոփոխություններին, ինչպես նաև անկանխատեսելի իրադարձություններին և մոնիտորինգի արդյունքներին։ Ցսահմանափակելով վերոնշյալի ընդհանրական բնույթը՝

1) եթե առկա է բնապահպանական կամ սոցիալական որևէ բացասական ազդեցություն կամ հարց, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն չի կանխատեսվել կամ ուսումնասիրվել Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում,

2) եթե Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրով սահմանված՝ ազդեցության մեղմման որևէ միջոց բավարար չէ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրով նախատեսված ժամկետներում որևէ բնապահպանական կամ սոցիալական ազդեցություն վերացնելու կամ մինչև այն մակարդակը նվազեցնելու համար, որը նախատեսված է Կատարողականի մասով սահմանված համապատասխան պահանջներով, կամ

3) եթե կարգավորող կամ կատարումն ապահովող որևէ մարմնի կողմից ստուգման արդյունքում հայտնաբերվել է Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի կամ որևէ բնապահպանական և սոցիալական օրենքի հետ որևէ էական անհամապատասխանություն,

ապա Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի իրականացման մարմինը գործնականում հնարավորինս ողջամիտ ժամկետում և Բանկի հետ համաձայնեցմամբ մշակի ու Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում ներառի այդ լրացուցիչ կամ վերանայված մեղմման միջոցները, որոնք կարող են անհրաժեշտ լինել Կատարողականի մասով սահմանված պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար՝ յուրաքանչյուր դեպքում Բանկի կողմից ընդունելի եղանակով։

Բաժին 3.05. Խորհրդատուները

ա) Ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով Վարկառուն, եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ, ապահովում է, որ Ծրագրի իրականացման մարմինը պահանջվող ձևով վարձի խորհրդատուներ կամ նպաստի նրանց վարձելուն, ինչպես նաև դիմի խորհրդատուների, որոնց որակավորումը, աշխատանքային փորձը և իրավասության շրջանակն ընդունելի են Բանկի համար, ներառյալ՝ ԾԻԳ-ին և (կամ) Ծրագրի համակարգմանն աջակցող խորհրդատուները:

բ) Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի իրականացման մարմինը Ծրագրին կամ Վարկառուի գործառնություններին առնչվող հարցերով աջակցության մեջ ներգրավված ցանկացած խորհրդատուի (ներառյալ ԾԻԳ խորհրդատուն/խորհրդատուները և Ծրագրի համակարգման մասով խորհրդատուն/խորհրդատուները) անվճար տրամադրի նրա գործառույթները կատարելու համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները և աջակցությունը, ներառյալ՝ գրասենյակային տարածքը և ֆոտոպատճենահանող սարքավորումները, ինչպես նաև բոլոր փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկություններ, որոնք կարող են առնչվել նրա աշխատանքին:

Բաժին 3.06. Ծրագրի հատուկ վավերապայմանները

Ի լրումն Ստանդարտ պայմանների IV հոդվածով սահմանված ընդհանուր պարտավորությունների և սույն՝ III հոդվածի մյուս բաժիններում ներկայացված վավերապայմանների և այն դեպքում, երբ Բանկի հետ այլ համաձայնություն առկա չէ, Վարկառուն կատարում և Ծրագրի իրականացման մարմնի կողմից ապահովում է հետևյալի կատարումը.

ա) հաստատում է Պետական եկամուտների կոմիտեի 2020-2024 թթ. ռազմավարությունը՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը և ապահովում դրա ընթացիկ իրականացումը մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը.

բ) ընդունում է կառավարության կանոնակարգեր (երկրորդային օրենսդրություն)՝ տրանսֆերային գնագոյացման մասով կարգավորումների կիրառման վերաբերյալ՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը.

գ) Ծրագրի ավարտից հետո հասնում է արդիականացված ՍԱ-ում կարողությունների մասով թիրախների ընթացիկ համապատասխանությանը և ապահովում այն՝ օրական հետևյալ հոսքային ցուցանիշներով՝ 900 տրանսպորտային միջոց, 3 000 ուղևոր և 750 բեռնատար տրանսպորտային միջոց՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը.

դ) Ծրագրի ավարտից հետո հասնում է ընթացիկ համապատասխանության և այն ապահովում հետևյալ միջին սպասելաժամանակի համար՝ րոպեներով՝ 15 րոպե բեռնատար տրանսպորտային միջոցների համար, 20 րոպե ավտոբուսների համար և 7 րոպե մարդատար տրանսպորտային միջոցների համար՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը.

ե) ապահովում է սահմանային համալիր կառավարման 2017-2021թթ. միջոցառումների ծրագրի շարունակական իրականացումը՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, և

զ) ապահովում է ԵՄ Արևելյան գործընկերության և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում էլեկտրոնային ուղեկցող փաստաթղթերի փոխադարձ ճանաչման գործընթացների հաջող իրականացումը՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը։

Բաժին 3.07 Հաշվետվությունների հաճախականության և ներկայացման մասով պահանջները

ա) Ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև վարկի ամբողջական մարումը կամ չեղարկումը Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի իրականացման մարմինը հաշվետու տարվա ավարտից հետո՝ 90 օրվա ընթացքում, Բանկին ներկայացնի Վարկառուին (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմնին) կամ Ծրագրին առնչվող՝ բնապահպանական և սոցիալական հարցերի վերաբերյալ տարեկան հաշվետվություններ: Նշված հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկություններ հետևյալ կոնկրետ հարցերի վերաբերյալ.

1) Կատարողականի մասով սահմանված պահանջներին Վարկառուի (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմնի միջոցով) համապատասխանության վերաբերյալ տեղեկություն, ինչպես նախատեսված է 3.04. բաժնի «ա» կետում և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի իրականացումը.

2) տեղեկություն այն մասին, թե ինչպես է Վարկառուն (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմնի միջոցով) մոնիտորինգի ենթարկել Ծրագրի համար ներգրավված ցանկացած կապալառուի կողմից համապատասխանությունը Կատարողականի մասով սահմանված պահանջներին և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին, և այդ կապալառուի կողմից Կատարողականի մասով սահմանված պահանջներին և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին ցանկացած էական անհամապատասխանության վերաբերյալ համառոտ նկարագրություն, ինչպես նաև այդ անհամապատասխանությունը վերացնելու համար

ձեռնարկված ցանկացած միջոցի մասին տեղեկություն.

3) Կատարողականի մասով սահմանված 10-րդ պահանջով նախատեսված՝ շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի իրականացման վերաբերյալ տեղեկություն, ներառյալ՝ ցանկացած ստացված դժգոհության և այդ դժգոհությունների լուծման արդյունքների համառոտ նկարագրությունը.

4) Ծրագրին առնչվող բնապահպանական և սոցիալական օրենքներին Վարկառուի (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմնի միջոցով) համապատասխանության վերաբերյալ տեղեկություն, ներառյալ՝ Վարկառուի նկատմամբ սկսված կամ հնարավոր ցանկացած պահանջի, վարույթի, կարգադրության կամ քննության նկարագրությունը, Ծրագրի համար պահանջվող ցանկացած թույլտվության կարգավիճակը, ցանկացած կարգավորող մարմնի կողմից ցանկացած ստուգման արդյունքները, կիրառելի օրենքների, կանոնակարգերի կամ ստանդարտների ցանկացած խախտում և այդ խախտման վերացման հետ կապված ցանկացած գործողություն կամ տուգանք, ցանկացած էական ծանուցման համառոտ նկարագրություն, հաշվետվություն և այլ տեղեկությունների փոխանցում՝ Ծրագրին առնչվող բնապահպանական և սոցիալական հարցերի վերաբերյալ, որը Վարկառուի կողմից (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմնի միջոցով) ներկայացվել է ցանկացած կարգավորող մարմնի, ինչպես նաև ցանկացած այլ հանգամանքի առնչությամբ, որն առաջացնում է Վարկառուի պատասխանատվությունը (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմնի միջոցով) բնապահպանական և սոցիալական հարցերի առնչությամբ.

5) աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության կառավարման և Ծրագրի՝ աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության մասով փաստաթղթերի վերաբերյալ

տեղեկություններ, այդ թվում՝ տեղեկություններ՝ դժբախտ պատահարների ցուցանիշների, աշխատունակության կորստի հետ կապված միջադեպերի և պոտենցիալ վտանգ ներկայացնող նմանատիպ միջադեպերի, Վարկառուի կողմից (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմնի միջոցով) ձեռնարկված կամ պլանավորված ցանկացած կանխարգելիչ կամ մեղմացուցիչ միջոցառման, աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության վերաբերյալ անձնակազմի վերապատրաստումների և աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության կառավարման հետ կապված ցանկացած այլ նախաձեռնության մասին, որն իրականացվել կամ պլանավորվել է Վարկառուի կողմից (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմնի միջոցով).

6) Ծրագրի վրա էական հնարավոր ազդեցություն ունեցող՝ բնապահպանական և սոցիալական օրենքներում ցանկացած փոփոխության համառոտ նկարագրություն, և

7) Վարկառուի կողմից իր շահառուներին կամ լայն հանրությանը պարբերաբար ներկայացվող՝ բնապահպանական և սոցիալական հարցերին առնչվող ցանկացած տեղեկության պատճենը:

բ) Ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի իրականացման մարմինը ներկայացնի Ստանդարտ պայմանների 4.04 բաժնի «ա» կետի v ենթակետով սահմանված՝ Ծրագրի մասով եռամսյակային պարբերական հաշվետվություններ՝ հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո՝ 90 օրվա ընթացքում՝ մինչև Ծրագրի ավարտը: Այդ հաշվետվությունները պետք է պարունակեն հետևյալ առանձնահատկությունները.

1) հետևյալ ընդհանուր տեղեկությունները.

Ա) հաշվետվության ներկայացման օրվա դրությամբ և հաշվետու ժամանակահատվածի ընթացքում Ծրագրի իրականացման գործընթացում արձանագրված ֆիզիկական առաջընթացը,

Բ) Ծրագրի իրականացման հետ կապված փաստացի կամ ակնկալվող բարդությունները կամ ուշացումները և դրանց ազդեցությունն իրականացման ժամանակացույցի վրա, ինչպես նաև փաստացի կատարված կամ պլանավորված քայլերը՝ ուղղված այդ դժվարությունների հաղթահարմանն ու ուշացումներից խուսափելուն,

Գ) Ծրագրի ավարտման ամսաթվի ակնկալվող փոփոխությունները,

Դ) ԾԻԳ-ի աշխատակազմի, խորհրդատուների կամ կապալառուների առանցքային անձնակազմում փոփոխությունները,

Ե) Ծրագրի արժեքի վրա ազդեցություն ունեցող գործոնները, և

Զ) Ծրագրի որևէ մասի տնտեսական կենսունակության վրա հավանական ազդեցություն ունեցող ցանկացած զարգացում կամ գործողություն:

2) Առաջընթացի վերաբերյալ «բար» աղյուսակ՝ հիմնված Ծրագրի իրականացման ժամանակացույցի վրա, որը ցույց է տալիս Ծրագրի յուրաքանչյուր մասում առաջընթացը և ներառում է պլանավորված և փաստացի ծախսերի վերաբերյալ գրաֆիկներ:

3) Ֆինանսական հաշվետվություններ, որոնք կարտացոլեն Ծրագրի յուրաքանչյուր մասի ներքո իրականացվող ծախսերի ու մասհանումների մանրամասները՝ դրանք զուգակցելով հաշվետվության հետ, որն

արտացոլում է՝

Ա) սկզբնական ծախսերի նախահաշիվը,

Բ) առկայության դեպքում՝ վերանայված ծախսերի նախահաշիվը՝ փոփոխությունների պատճառների նշումով,

Գ) սկզբնական գնահատված ծախսերը և տվյալ օրվա դրությամբ փաստացի ծախսերը,

Դ) տվյալ օրվա դրությամբ փաստացի և սկզբնական գնահատված ծախսերի միջև տարբերությունների պատճառները, և

Ե) տարվա մնացած եռամսյակների համար գնահատված ծախսերը:

4) Սույն Համաձայնագրում պարունակվող վավերապայմաններից յուրաքանչյուրին համապատասխանության կարգավիճակի վերաբերյալ համառոտ հաշվետվություն:

5) Ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև՝ (i) վարկի մայր գումարի մարումը բոլոր տոկոսավճարների, վճարների և այլ վճարվելիք գումարների հետ միասին՝ ամբողջությամբ, կամ դրանց չեղարկումը, և (ii) Սահմանների համալիր կառավարման ծրագրի ամբողջական իրականացումը՝ կախված այն հանգամանքից, թե նշվածներից որն է տեղի ունենում ավելի վաղ, Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի իրականացման մարմինը Վարկառուի յուրաքանչյուր ֆիսկալ տարվա ավարտից հետո՝ 90 օրվա ընթացքում, Բանկին ներկայացնի տարեկան զեկույց՝ Սահմանների համալիր կառավարման ծրագրի իրականացման վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե դրա առանցքային նպատակները որքանով են իրագործվել:

գ) Վարկառուին կամ Ծրագրին առնչվող ցանկացած այնպիսի միջադեպի կամ դժբախտ պատահարի առաջացման դեպքում, որն ունի կամ կարող է նշանակալի բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի կամ հանրության կամ աշխատողների առողջության կամ անվտանգության վրա, Վարկառուն անմիջապես այդ մասին տեղեկացնում է Բանկին և այնուհետև անհապաղ Բանկին ծանուցում է դրա բնույթի ու Վարկառուի կողմից դրա վերացման համար ձեռնարկվող քայլերի մասին: Չսահմանափակելով վերոնշյալի ընդհանրական բնույթը՝

1) որևէ միջադեպ կամ դժբախտ պատահար համարվում է Ծրագրին առնչվող, եթե տեղի է ունենում Ծրագրի առնչությամբ օգտագործվող որևէ տարածքում կամ առաջանում է Ծրագրի համար օգտագործվող կամ դրա հետ առնչություն ունեցող տեխնիկական միջոցների, սարքավորումների, ավտոմեքենաների կամ նավերի պատճառով (անկախ այն հանգամանքից՝ դրանք օգտագործվել են Ծրագրի հետ կապված որևէ տարածքում, թե ոչ, կամ օգտագործվել են դրա թույլտվությունն ունեցող կամ չունեցող անձանց կողմից).

2) միջադեպը կամ դժբախտ պատահարը համարվում է շրջակա միջավայրի կամ հանրության կամ աշխատողների առողջության կամ անվտանգության վրա նշանակալի բացասական ազդեցություն ունեցող, եթե՝

Ա) ցանկացած կիրառելի օրենքով պահանջվում է նման միջադեպի կամ դժբախտ պատահարի մասին ծանուցում պետական կառավարման որևէ մարմնի,

Բ) այդ միջադեպը կամ դժբախտ պատահարը որևէ անձի (անկախ այն հանգամանքից, թե այդ անձը Վարկառուի աշխատողն է, թե՝ ոչ) մահվամբ ելք է ունենում,

Գ) մեկից ավելի անձինք (անկախ այն հանգամանքից, թե այդ անձինք Վարկառուի աշխատողներն են, թե՝ ոչ) ստացել են լուրջ վնասվածքներ և ենթակա են հոսպիտալացման, կամ

Դ) այդ միջադեպը կամ դժբախտ պատահարը դարձել է կամ կարող է դառնալ հանրությանը հասանելի տեղեկություն՝ մեդիա ծածկույթի միջոցով կամ այլ կերպ։

դ) Վարկառուն Բանկին անհապաղ ծանուցում է աշխատողների կամ հանրության անդամների կողմից որևէ նշանակալից բողոքի կամ պահանջի մասին, որն ուղղված է Վարկառուին կամ առնչվում է նրա կամ Ծրագրի հետ, և որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Վարկառուի կամ Ծրագրի վրա, կամ որը դարձել է կամ կարող է դառնալ հանրությանը հասանելի տեղեկություն՝ մեդիա ծածկույթի միջոցով կամ այլ կերպ։ Այդ ծանուցումից հետո՝ տասն օրվա ընթացքում, Վարկառուն պետք է ներկայացնի Բանկի համար ընդունելի հաշվետվություն՝ մանրամասնելով Վարկառուի ուսումնասիրության արդյունքները վերոնշյալ բողոքի դեպքի առնչությամբ, ինչպես նաև բողոքում կամ պահանջում բարձրացված խնդիրների լուծմանն ուղղված՝ Վարկառուի կողմից ձեռնարկված կամ ձեռնարկելու համար առաջարկվող քայլերի նկարագրությունը։

ՀՈԴՎԱԾ IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաժին 4.01. Ֆինանսական փաստաթղթերն ու հաշվետվությունները

ա) Վարկառուն իր՝ Ծրագրի կամ դրա ցանկացած մասի կատարման համար պատասխանատու ստորաբաժանումների կամ մարմինների (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմնի) առնչությամբ շարունակաբար իրականացնում է ընթացակարգեր, վարում է փաստաթղթեր և հաշիվներ,

որոնք, հետևողականորեն կիրառվող՝ միջազգայնորեն ընդունված հաշվապահական ստանդարտներին համապատասխան, ստույգ արտացոլում են Ծրագրին առնչվող գործառնությունները, ռեսուրսներն ու ծախսերը և հնարավորություն են տալիս մոնիտորինգի ենթարկելու և արձանագրելու Ծրագրի առաջընթացը (ներառյալ դրա հետ կապված ծախսերն ու դրանից ստացվելիք օգուտները)։

բ) Վարկառուն պետք է՝

1) ունենա 4.01 բաժնի «ա» կետում նշված փաստաթղթերն ու հաշիվները, ներառյալ՝ յուրաքանչյուր Հատուկ հաշվի հետ առնչություն ունեցող փաստաթղթերն ու հաշիվները՝ յուրաքանչյուր ֆիսկալ տարվա համար, որոնք պետք է աուդիտի ենթարկվեն Բանկի կողմից ընդունելի անկախ աուդիտորների կողմից՝ աուդիտի միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և ստանդարտներին համապատասխան.

2) հասանելի լինելուն պես, սակայն ամեն դեպքում ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆիսկալ տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, Բանկին ներկայացնի այդ աուդիտորների կողմից պատրաստված՝ այդ շրջանակներում կատարված աուդիտի մասին հաշվետվությունն այնպիսի շրջանակով և այնպիսի մանրամասնությամբ, ինչպիսին Բանկի կողմից կարող է ողջամտորեն պահանջվել, և

3) Բանկին տրամադրի ցանկացած այլ տեղեկություն այդ փաստաթղթերի ու հաշիվների և դրանց մասով աուդիտի մասին, որը Բանկը ժամանակ առ ժամանակ կարող է ողջամտորեն պահանջել։

ՀՈԴՎԱԾ V. ԿԱՍԵՑՈՒՄԸ, ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՈՒՄԸ, ՉԵՂԱՐԿՈՒՄԸ

Բաժին 5.01. Կասեցումը

Ստանդարտ պայմանների 7.01 բաժնի «ա» կետի xvii ենթակետի նպատակներով սահմանված է հետևյալը.

ա) Վարկառուի տարածքում մաքսատուրքերի և սահմանների կառավարման նկատմամբ կիրառելի օրենսդրական և կարգավորող շրջանակը փոփոխվել, կասեցվել, չեղյալ է հայտարարվել, ուժը կորցրած է ճանաչվել կամ վերացվել է այնպիսի ձևով, որը Բանկը բնորոշում է վնասակար Ծրագրի համար կամ Վարկառուի կամ Ծրագրի իրականացման մարմնի կողմից Ծրագրի իրականացման կարողությունների կամ Վարկառուի կողմից սույն Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունների կատարման համար,

բ) Վարկառուն չի կատարել դրամաշնորհային համաձայնագրերից որևէ մեկի շրջանակներում իր պարտավորություններից որևէ մեկը, կամ

գ) որևէ դրամաշնորհային համաձայնագրի առնչությամբ, *mutatis mutandis,* վրա է հասել Ստանդարտ պայմանների 7.01 բաժնի «ա» կետի x ենթակետում նկարագրված իրադարձություններից ցանկացածը:

Բաժին 5.02. Վաղաժամկետ մարումը

Ստանդարտ պայմանների 7.06. բաժնի «զ» կետի նպատակներով սահմանվում է հետևյալը.

ա) 5.01 բաժնում նշված ցանկացած իրադարձություն վրա է հասել և շարունակվել 30 օրվա ընթացքում՝ այն օրվանից, երբ դրա մասին ծանուցումը պետք է Բանկի կողմից տրված լիներ Վարկառուին:

Բաժին 5.03. Չեղարկումը

Եթե ցանկացած ժամանակ Բանկը պարզի, որ Հատուկ հաշվից (վարկ) կատարված որևէ վճարում կամ այդ հաշվից ցանկացած գումարի օգտագործում կատարվել է 3-րդ հավելվածի պահանջներին հակասող ձևով, և սահմանի վարկի այն գումարը, որի նկատմամբ կատարվել է այդ չարաշահումը, Բանկը կարող է, Վարկառուին ծանուցելով, դադարեցնել Վարկառուի՝ այդ գումարի նկատմամբ մասհանումներ կատարելու իրավունքը: Նման ծանուցման դեպքում վարկի այդ գումարը չեղարկվում է:

ՀՈԴՎԱԾ VI. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Բաժին 6.01. Ուժի մեջ մտնելու համար նախապայմանները

Ստանդարտ պայմանների 9.02 բաժնի «գ» կետի նպատակներով սահմանված են հետևյալ պայմանները՝ որպես սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ լրացուցիչ պայմաններ.

ա) ԵՄ ՀՆՊ ՏՀ դրամաշնորհային համաձայնագիրը ստորագրվել է և հանձնվել, և

բ) ԵՄ ՀՆՊ ներդրումային դրամաշնորհային համաձայնագիրը ստորագրվել է և հանձնվել:

Բաժին 6.02. Իրավաբանական եզրակացությունը

Ստանդարտ պայմանների 9.03 բաժնի «ա» կետի նպատակներով իրավախորհրդատուի եզրակացությունը կամ եզրակացությունները Վարկառուի

անունից տրվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից։

Բաժին 6.03. Ուժի մեջ չմտնելու հետևանքով դադարելը

Ստանդարտ պայմանների 9.04 բաժնի նպատակներով սահմանվում է սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից 180 օրվան հաջորդող ամսաթիվը։

ՀՈԴՎԱԾ VII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բաժին 7.01. Ծանուցումները

ա) Ստանդարտ պայմանների 10.01 բաժնի նպատակներով սահմանվում են հետևյալ հասցեները, ինչպես նաև համաձայնություն է ձեռք բերվում այն մասին, որ սույն Համաձայնագրի նպատակներով ծանուցումներն ու պահանջները (հայտերը) կարող են նաև ուղարկվել էլեկտրոնային փոստով՝ ստորև նշված հասցեներով.

Վարկառուի համար՝

Ֆինանսների նախարարություն,

Հայաստանի Հանրապետություն,

Երևան 0010,

Մելիք-Ադամյան փողոց, շենք 1

Ուղղվում է՝ նախարարին

Հեռախոս (սուրհանդակների համար) +374 11 800156

Էլ. հասցե՝ secretariat@minfin.am

Բանկի համար՝

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

One Exchange Square

London EC2A 2JN

United Kingdom

Ուղղվում է՝ Գործառնությունների կառավարման բաժին

Հեռախոս (սուրհանդակների համար) +44 20 7338 6000

Էլ. հասցե՝ oad@ebrd.com

բ) Բանկը կարող է առաջարկել Վարկառուին գրանցվել՝ օգտագործելու համար ClientNet համակարգը կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ ձև, և եթե Վարկառուն և Բանկը համաձայնվում են օգտագործել ClientNet համակարգը կամ էլեկտրոնային հաղորդակցության այդպիսի այլ ձև, ապա Վարկառուից Բանկին կամ Բանկից Վարկառուին ցանկացած ծանուցում, դիմում կամ հաղորդում (բացի ցանկացած ծանուցումից, դիմումից կամ այլ հաղորդումից, որը, սույն Համաձայնագրի կամ դրամաշնորհային որևէ համաձայնագրի համաձայն, պետք է լինի բնօրինակով, հաստատված կամ թղթային տարբերակով) կարող է, ClientNet համակարգի կամ այդպիսի այլ

էլեկտրոնային հաղորդակցության պայմաններին համապատասխան, տրվել կամ կատարվել՝ այդ ծանուցումը, դիմումը կամ այլ հաղորդում ClientNet համակարգում տեղադրելու միջոցով, կամ ուղարկվել էլեկտրոնային հաղորդակցության այդպիսի այլ ձևի առնչությամբ համաձայնեցված պայմաններին համապատասխան:

գ) Ցանկացած ծանուցում, դիմում կամ այլ հաղորդում, որն ստացվել է առձեռն, օդային փոստով կամ էլեկտրոնային փոստով կամ ClientNet համակարգի միջոցով կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ համաձայնեցված ձևով, ուժի մեջ է համարվում ընթեռնելի ձևով փաստացի ստանալու (կամ հասանելի դարձվելու) պահից՝ պայմանով, որ ցանկացած ծանուցում, դիմում կամ այլ հաղորդում, որը ստացվել է (կամ հասանելի է դարձել) 17:00-ից հետո, այն վայրի ժամանակով, որտեղ համապատասխան ծանուցման, դիմումի կամ հաղորդման հասցեատեր կողմն ունի իր՝ սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվող հասցեն, ուժի մեջ է համարվում հաջորդ օրվանից:

դ) Ստորև ներկայացված են ClientNet-ի առնչությամբ Բանկի կողմից Վարկառուին ուղարկվող ցանկացած հրավերի նպատակով որպես Վարկառուի հիմնական կոնտակտային անձ նշանակված անձանց անունները, պաշտոնները և էլեկտրոնային հասցեները:

Անուն	Պաշտոն	Էլեկտրոնային հասցե
Արշալույս Մարգարյան	Պետական պարտքի կառավարման վարչության պետ, ֆինանսների նախարարություն	arshaluys.margaryan@minfin.am
Արտակ Մարության	Պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի պետ, ֆինանսների	artak.marutyan@minfin.am

	նախարարություն	
Նաիրա Գրիգորյան	Պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ, ֆինանսների նախարարություն	naira.grigoryan@minfin.am
Մարինե Հարությունյան	Պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ, ֆինանսների նախարարություն	marine.harutyunyan@minfin.am

Բաժին 7.02. Փոփոխությունները

Ստանդարտ պայմանների 10.03 բաժնի «ա» կետի նպատակներով՝ ցանկացած փոփոխություն, որը Բանկի և Վարկառուի համատեղ կարծիքով չի ավելացնում Վարկառուի պարտավորությունները, ուժի մեջ կմտնի այն պահից, երբ փոփոխությունը ուժի մեջ մտցնող գրավոր փաստաթուղթը ստորագրվել է Վարկառուի լիազոր ներկայացուցչի և Բանկի պատշաճ լիազորված անձի կողմից:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն Համաձայնագրի կողմերը, գործելով իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը չորս օրինակից և հանձնեցին այն Երևանում՝ Հայաստանի Հանրապետությունում, վերը նշված ամսաթվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

Անուն՝ Ատոմ Ջանջուղազյան

Պաշտոն՝ ֆինանսների նախարար

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ

_____

Անուն՝ Դիմիտրի Գվինդաձե

Պաշտոն՝ ՎԶԵԲ Հայաստանյան գրասենյակի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ծրագրի նպատակն է աջակցել Վարկառուին՝ ֆինանսավորելու Հայաստանի Հանրապետության հարավային սահմանի երկայնքով Մեղրի քաղաքի մոտակայքում ներկայիս ՍԱ արդիականացումն ու ընդլայնումը:

2. Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից, որոնք կարող են փոփոխվել Բանկի և Վարկառուի կողմից ժամանակ առ ժամանակ դրանց վերաբերյալ ձեռք բերված համաձայնությանը համապատասխան:

ՄԱՍ Ա. Կապիտալ ծախսեր՝

Մեղրիի ՍԱ ներկայիս սարքավորումների արդիականացում և առկա տարածքների ընդլայնում:

ՄԱՍ Բ. Խորհրդատվական ծառայություններ՝

ա) աշխատանքների նկատմամբ վերահսկողություն,

բ) Ծրագրի իրականացմանն աջակցություն/ ԾԻԳ խորհրդատու(ներ)/ Ծրագրի համակարգման մասով խորհրդատու:

3. Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2024 թվականի նոյեմբերի 30-ը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն հավելվածին կցված աղյուսակը սահմանում է կատեգորիաները, յուրաքանչյուր կատեգորիային հատկացված վարկի գումարը և յուրաքանչյուր կատեգորիայի համար նախատեսված ծախսերի ֆինանսավորման տոկոսային արտահայտությունը:

2. Չնայած 1-ին կետում նշված դրույթներին՝ մասհանում չի կատարվում, քանի դեռ Բանկի համար ձևով և էությամբ ընդունելի եղանակով չի կատարվել հետևյալ պայմաններից յուրաքանչյուրը, կամ բացառապես Բանկի հայեցողությամբ չեն վերացվել դրանք՝ անկախ այն հանգամանքից, թե վերացվել են ամբողջությամբ, թե մասամբ, պայմանական, թե անվերապահորեն.

   ա) դրամաշնորհային համաձայնագրերն ուժի մեջ մտնելու կամ դրանց համաձայն մասհանումներ կատարելու՝ Վարկառուի իրավունքը ծագելու համար անհրաժեշտ բոլոր նախապայմանները, բացի միայն սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար նախապայմաններից, կատարվել են.

   բ) Ծրագրի իրականացման մարմնում ստեղծվել է բավարար ռեսուրսներով և Բանկի կողմից ընդունելի տեխնիկական առաջադրանքներին համապատասխան որակավորված անձնակազմով ԾԻԳ.

   գ) Բանկի կողմից ընդունելի տեխնիկական առաջադրանքի համաձայն նշանակվել են ԾԻԳ խորհրդատուն (խորհրդատուները) և Ծրագրի համակարգման մասով խորհրդատուն, և

   դ) եթե Բանկը դիմել է, Վարկառուն բացել է Բանկի կողմից ընդունելի

պայմաններով յուրաքանչյուր Հատուկ հաշիվը:

3. Չնայած 1-ին կետում նշված դրույթներին՝

ա) Վարկային համաձայնագրի ստորագրումից առաջ կատարված ծախսերի առնչությամբ մասհանումներ չեն կարող կատարվել.

բ) Ծրագրի Մաս Ա-ի շրջանակներում կատարված ծախսերի առնչությամբ մասհանումներ չեն կարող կատարվել, քանի դեռ Բանկի կողմից ընդունելի տեխնիկական առաջադրանքի համաձայն չեն նշանակվել խորհրդատուները, ինչպես նկարագրված է Մաս Բ-ի «ա» և «բ» կետերում:

4. Բանկն իրավունք ունի Վարկառուի անունից մասհանելու և ինքն իրեն վճարելու միանվագ կոմիսիոն վճարը՝ վճարման կարգին և ժամկետին համապատասխան:

Հավելված 2-ի առդիր

Կատեգորիաները	**Տրամադրված վարկի գումարը՝ վարկի արժույթով**	**Ֆինանսավորվող ծախսերի տոկոսային արտահայտությունը**
1) Մաս Ա-ի և Մաս Բ-ի հետ կապված աշխատանքներ և ծառայություններ (ներառյալ չնախատեսված ծախսերը)	Մինչև 10 520 000 եվրո	Մինչև պայմանագրի արժեքի 100%-ը՝ առանց հարկերի
2) Միանվագ կոմիսիոն վճար	106 263 եվրո	100%
Ընդհանուր	**10 626 263 եվրո**	

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎԸ

1. Սույն հավելվածի նպատակներով հետևյալ եզրույթներն ունեն հետևյալ նշանակությունը.

«թույլատրելի ծախսեր»	նշանակում է՝ Կատեգորիա 1-ի շրջանակներում կնքված՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման ցանկացած պայմանագրի առնչությամբ ծախսեր, որում Բանկը նշել է, որ այդ պայմանագրի համաձայն վճարումներ կատարելու համար մասհանումների առնչությամբ կիրառվում է սույն 3-րդ հավելվածը.
«Հատուկ հաշվի առավելագույն մասհանումների գումար»	նշանակում է՝ մասհանման հայտին հաջորդող 30 օրվա ընթացքում ենթակա այն վճարումները չգերազանցող գումար, որոնց համար ներկայացվել են համապատասխան թույլատրելի ծախսերի առնչությամբ կապալառուի (կապալառուների) և (կամ) խորհրդատուի (խորհրդատուների) հաշիվ-ապրանքագրերը.
«Հատուկ հաշվի մասհանման նվազագույն գումար»	նշանակում է՝ 50 000 եվրոյին համարժեք գումար։

2. Հատուկ հաշվից (վարկ) վճարումները պետք է կատարվեն բացառապես թույլատրելի ծախսերի համար՝ սույն հավելվածի դրույթներին

համապատասխան։

3. Այն բանից հետո, երբ Բանկը ստանա բավարար ապացույց այն մասին, որ Հատուկ հաշիվը (վարկ) Բանկի համար ընդունելի պայմաններին համապատասխան բացվել է՝ ներառյալ հաշվանցումից, առգրավումից և արգելանք դնելուց պաշտպանությունը, Բանկը կարող է պահանջել, որ թույլատրելի ծախսերի առնչությամբ Վարկառուի կողմից հասանելի գումարների մասհանումները մուտքագրվեն այդ Հատուկ հաշվին (վարկ)։

4. Հասանելի գումարից գումարների մասհանումները և 3-րդ կետին համապատասխան դրանց մուտքագրումը Հատուկ հաշվին (վարկ) ենթակա են 6-րդ կետում սահմանված սահմանափակումների, և յուրաքանչյուր պահանջվող մասհանման դեպքում պետք է բավարարվեն հետևյալ պայմանները.

   ա) Վարկառուն Բանկին է ներկայացնում հաշվի քաղվածքներն ու փաստաթղթերը, ինչպես նաև Բանկի կողմից պահանջվող ցանկացած այլ ապացույց՝ ցույց տալու համար, որ Հատուկ հաշվից (վարկ) մասհանված գումարները պատշաճորեն են կիրառվել.

   բ) Վարկառուն Բանկին է ներկայացնում կապալառուին (կապալառուներին) և (կամ) խորհրդատուին (խորհրդատուներին) վճարման ենթակա գումարների առնչությամբ հաշիվ-ապրանքագրերը և ցանկացած այլ տեղեկություն, որը Բանկը կարող է պահանջել՝ համաձայն ՎԶԵԲ-ի Մասհանումների ձեռնարկի, եթե Բանկը վճարումներն ուղղակիորեն կատարում է կապալառուին (կապալառուներին) և (կամ) խորհրդատուին (խորհրդատուներին).

   գ) եթե Բանկն այլ բանի վերաբերյալ համաձայնություն չի տվել, Հատուկ հաշիվ (վարկ) մուտքագրման համար հայցվող մասհանման գումարը

չպետք է գերազանցի Հատուկ հաշվի առավելագույն մասհանման գումարը ավելի պակաս, քան (i) Դրամաշնորհային համաձայնագրի համաձայն դրամաշնորհային ֆինանսավորման հայցվող ցանկացած մասհանման գումարը և (ii) մասհանման դիմելու պահին Հատուկ հաշվի (վարկի) և Հատուկ հաշվի (Ներդրումային դրամաշնորհի) վարկային մնացորդը (կամ դրա համարժեքը հայկական դրամով, ինչպես որոշված է Բանկի կողմից՝ ելնելով ՀՀ Կենտրոնական բանկի իր կայքում որպես «պաշտոնական փոխարժեք» հրապարակած արժույթի փոխարժեքից՝ (ա) հայկական դրամը եվրոյով գնելու համար, կամ (բ) եվրոն հայկական դրամով (ըստ կիրառության) այդպիսի մասհանման դիմելու պահին).

դ) Հատուկ հաշվին (վարկ) մուտքագրվելիք՝ հայցվող մասհանման գումարը չպետք է պակաս լինի Հատուկ հաշվի մասհանման նվազագույն գումարից, եթե Բանկն այլ բանի վերաբերյալ համաձայնություն չի տվել:

Վարկառուն ընդունում և համաձայնում է, որ Բանկի կողմից Հատուկ հաշիվ (վարկի) մուտքագրման հետ կապված ցանկացած մասհանում պետք է իրականացվի եվրոյով: Եթե Հատուկ հաշիվ (վարկ) մուտքագրվելուց հետո այդպիսի գումարները փոխարկվեն ցանկացած այլ արժույթի, ներառյալ հայկական դրամի, Վարկառուն ընդունում է այդ փոխարկման և Հատուկ հաշիվ (վարկ) մուտքագրման ամսաթվից մինչև ցանկացած թույլատրելի ծախսերի վճարման ամսաթիվը փոխարժեքի ցանկացած տատանումների հետ կապված բոլոր ռիսկերը: 3.01 (ա) բաժնի համաձայն՝ Վարկառուն պատասխանատու է՝ լրացնելու ցանկացած պակասը՝ Ծրագրի իրականացման համար համապատասխան միջոցներ ապահովելու համար:

5. Չսահմանափակելով վերոնշյալ 4-րդ կետի պահանջները՝ Վարկառուն.

ա) անհապաղ և ցանկացած դեպքում ոչ ուշ, քան՝ i) համապատասխան

կապալառու(ներ)ի կամ խորհրդատու(ներ)ի վճարման համար սահմանված ժամկետը, և ii) մասհանման ամսաթվից հետո 30 օր հետո օգտագործում է Հատուկ հաշվի (վարկի) վարկային մնացորդի գումարը, այդ կապալառուին կամ խորհրդատուին վճարումներ կատարելու համար և անմիջապես տրամադրում է Բանկի համար ընդունելի ապացույց առ այն, որ այդպիսի գումարներ ստացվել են համապատասխան կապալառուի կամ խորհրդատուի կողմից, և

բ) և ցանկացած ժամանակ Բանկի կողմից ողջամիտ պահանջի դեպքում Բանկին ներկայացնում է հաշվետվություն՝ Հատուկ հաշվի (վարկ) մնացորդի և այլ մանրամասների վերաբերյալ, ներառյալ՝ հաշվի քաղվածքներն ու նմանատիպ այլ փաստաթղթեր և ապացույցներ, որոնք Բանկը կարող է պահանջել՝ ցույց տալու համար, որ Հատուկ հաշվից (վարկ) վճարումները կատարվել են սույն հավելվածում սահմանված պահանջներին համապատասխան:

6. Չնայած սույն հավելվածի 4-րդ կետի դրույթներին՝ Բանկը ցանկացած պահի կարող է տեղեկացնել Վարկառուին, որ հետագա մարումները ուղղակիորեն իրականացվում են կապալառու(ներ)ին և (կամ) խորհրդատու(ներ)ին՝ սույն Համաձայնագրի և ՎՋԵԲ-ի Մասհանման ձեռնարկի դրույթներին համապատասխան, որից հետո Վարկառուն չպետք է Հատուկ հաշվին (վարկ) մուտքագրելու նպատակով հասանելի գումարից մասհանի միջոցները:

Այնուհետև, թույլատրելի ծախսերի համար հատկացված մասհանումները պետք է կատարվեն այնպիսի ընթացակարգերով, որոնց մասին Բանկը կնշի Վարկառուին ուղարկված ծանուցմամբ: Այդպիսի հետագա մասհանումները պետք է կատարվեն միայն այն պահից հետո և այն ծավալով, որքանով Բանկը կհավաստիանա, որ Հատուկ հաշվի (վարկ) բոլոր մնացորդային գումարներն այդ ծանուցման օրը կօգտագործվեն թույլատրելի ծախսերի համար վճարումներ կատարելու

նպատակով:

7. Եթե Բանկը որևէ պահի պարզի, որ Հատուկ հաշվից (վարկ) ցանկացած վճարում կամ դրա ցանկացած օգտագործում՝

ա) կատարվել է սույն հավելվածի 2-րդ կետի համաձայն ոչ թույլատրելի ծախսի կամ գումարի համար, կամ

բ) հիմնավորված չէ Բանկին ներկայացված ապացույցով,

ապա Բանկը կարող է պահանջել, որ Վարկառուն՝

1) տրամադրի այդպիսի լրացուցիչ ապացույց՝ ըստ Բանկի պահանջի, և (կամ)

2) մուտքագրի Հատուկ հաշվին (վարկ) (կամ, եթե Բանկը պահանջի, վճարի Բանկին) գումար, որը հավասար կլինի ոչ թույլատրելի կամ չհիմնավորված այդպիսի վճարման կամ վճարման համապատասխան մասի գումարին:

Այն դեպքում, երբ Բանկը պարզում է վերոնշյալ «ա» և «բ» կետերով նախատեսված դեպքերի առկայությունը, եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվում, Հատուկ հաշվին (վարկ) մասհանումներ չեն կատարվում այնքան ժամանակ, մինչև Վարկառուն՝ Ա) կատարի ոչ թույլատրված կամ չհիմնավորված համարվող այդպիսի վճարման (կամ դրա մի մասի) գումարին հավասար գումարի չափով մուտքագրում Հատուկ հաշվին (վարկ) կամ վճարում Բանկին, կամ Բ) Բանկին բավարարող լրացուցիչ ապացույց տրամադրի, որը կհավաստի, որ Հատուկ հաշվից (վարկ) նախկինում մասհանված այդ գումարները պատշաճորեն են կիրառվել:

8. Եթե՝

ա) Բանկը ցանկացած պահի պարզի, որ Հատուկ հաշվում (վարկ) առկա՝ չվճարված որևէ գումար այլևս անհրաժեշտ չէ թույլատրելի ծախսերի առնչությամբ հետագա վճարումների կատարման համար, կամ

բ) Բանկը ցուցում տա Վարկառուին՝ Բանկին վճարել 7-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան գումարը,

ապա Վարկառուն պետք է Բանկից ծանուցում ստանալուն պես՝ անհապաղ, Բանկին վճարի այդ գումարին հավասար վարկի գումարը: Այդ նպատակով, համաձայն ստորև 10-րդ կետի, վարկի վճարումը դրա տոկոսավճարների վճարման նույն օրը կատարելու վերաբերյալ պահանջը վերացվում է:

9. Վարկառուն կարող է, Ստանդարտ պայմանների 3.07 բաժնի «ա» ենթակետին համապատասխան Բանկին նախապես ծանուցելով, տոկոսավճարի վճարման ցանկացած օր որպես կանխավճար վճարել Հատուկ հաշվին (վարկ) մուտքագրված՝ վարկից ստացված միջոցներն ամբողջությամբ կամ դրանց ցանկացած մաս:

10. Վերոնշյալ 8-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ ցանկացած կանխավճար պետք է կատարվի Ստանդարտ պայմանների 3.07 բաժնին համապատասխան՝ պայմանով, որ՝ ա) չնայած Ստանդարտ պայմանների 3.07 բաժնի «գ» կետի i ենթակետի «Ա» պարբերությանը՝ այդ կանխավճարի նկատմամբ կիրառելի չէ նվազագույն կանխավճարի գումարի մասով պահանջը, և բ) եթե այդ կանխավճարն արվել է այլ օր, քան նախատեսված է որպես տոկոսավճարի վճարման օր, ապա դրա նկատմամբ կիրառելի է պայմանների փոփոխության հետևանքով առաջացած ծախսերի վճարը՝ Ստանդարտ պայմանների 3.10 բաժնին համապատասխան: Վերոնշյալ 8-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ ցանկացած կանխավճար պետք է Բանկի կողմից կիրառվի Ստանդարտ պայմանների 3.07 բաժնի «գ» կետի ii ենթակետին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
PR1	**Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների և հարցերի գնահատում և կառավարում**						
1.1	Նախաձեռնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից Մեղրիի սահմանային անցակետի արդիականացման ծրագրի ՇՄԱԳ և փորձաքննություն՝ պետական փորձաքննական եզրակացությունը վերահրապարակելու նպատակով: Փորձաքննությունը կարող է արվել՝ հիմք ընդունելով լրամշակված ՇՄԱԳ զեկույցը, որը մշակվել է 2017-2018 թթ.	Պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից տուգանքների ռիսկ: Հանրության կողմից բողոքների ռիսկ	ՎԶԵԲ PR1 Բնապահպանական և սոցիալական գնահատում ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»	Արտաքին խորհրդատուներ 8 000-10 000 եվրո ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	Մինչև տեղում աշխատանքների իրականացումը	Պետական փորձաքննական դրական եզրակացություն	Բաց է
1.2	Մեղրիի սահմանային անցակետի արդիականացումից հետո մշակել և իրականացնել բնապահպանական և աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության կառավարման համակարգ, որը համահունչ կլինի սահմանային անցակետի բնապահպանական, առողջապահական և անվտանգության ազդեցության սանդղակին ու մակարդակին: Որպես չափորոշիչներ՝ առաջարկվում են ISO 14001 և ISO 45001 պահանջները	Արդյունավետ բնապահպանական, աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության ու սոցիալական կառավարում՝ պաշտոնականացված համակարգի միջոցով	ՎԶԵԲ PR1 Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգեր ISO 14001 և ISO 45001 ստանդարտներ	Արտաքին խորհրդատուներ 25 000-30 000 եվրո ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	2022թ. 4-րդ եռամսյակից 2023թ. 4-րդ եռամսյակ	Առկա և իրականացված բնապահպանական, առողջապահական, անվտանգության և ապահովության կառավարման համակարգ, այդ թվում՝ կառավարման փաստաթղթեր և գործընթացներ	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
1.3	Նշանակել սահմանային անցակետի բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով կատարողականի համար (ներառյալ հրդեհային անվտանգությունը) պատասխանատու անձին (համապատասխան գիտելիքներով և փորձով)	Սահմանային անցակետի բնապահպանական, առողջապահական և անվտանգության գործողությունների առավել լավ կառավարում	ՎԶԵԲ PR1 Կազմակերպական կարողություններ և հանձնառություններ	Ներքին ռեսուրսներ (ընտրված մասնագետ), արտաքին վերապատրաստում ՊԵԿ-ի բարձր օղակի ղեկավարներ	2021թ. 3-րդ եռամսյակ	Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով մասնագետը նշանակված է և վերապատրաստված	Բաց է
1.4	Սահմանել բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով նպատակները, ինչպես նաև սահմանային անցակետի մասով հիմնական հանձնառություններն ու պատասխանատվությունը, ինչպես նաև դրանք ներառել բնապահպանական, առողջապահական և անվտանգության քաղաքականություններում	Բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով հանձնառությունների և պատասխանատվության պատշաճ տեղաբաշխում	ՎԶԵԲ PR1 Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն	Ներքին ռեսուրսներ ՊԵԿ-ի բարձր օղակի ղեկավարներ	2023թ. 1-ին եռամսյակ	Բնապահպանական և աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության մասով սահմանված նպատակներ, հանձնառություններ և պարտականություններ	Բաց է
1.5	Մշակել և իրականացնել բնապահպանական, առողջապահական և անվտանգության պլան/ծրագիր՝ ուղղված բնապահպանական և աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության մասով նպատակների ու հանձնառությունների իրագործմանը	Շրջակա միջավայրի պատշաճ պլանավորում, իրականացում և մոնիտորինգ	ՎԶԵԲ PR1 Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան	Ներքին ռեսուրսներ ՊԵԿ-ի բարձր օղակի ղեկավարներ	2023թ. 1-ին եռամսյակից 2023թ. 2-րդ եռամսյակ	Մշակված, իրականացված և մոնիտորինգի ենթարկված՝ բնապահպանական, առողջապահական և անվտանգության պլաններ/ծրագրեր	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎՁԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
1.6	Բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով պատասխանատու մասնագետի համար իրականացնել մասնագիտական վերապատրաստում/ իրազեկության բարձրացում մասնագիտացված հաստատություններում	Սահմանային անցակետի հետ կապված բնապահպանական, առողջապահական և անվտանգության գործողությունների առավել լավ կառավարում	ՎՁԵԲ PR1 Կազմակերպական կարողություններ և հանձնառություններ	Ներքին ռեսուրսներ (ընտրված մասնագետ), արտաքին վերապատրաստումներ ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	2021թ. 3-րդ եռամսյակից 2021թ. 4-րդ եռամսյակ	Բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով վերապատրաստումներն իրականացված են, և մասնակցությունը փաստաթղթավորված է	Բաց է
1.7	Մշակել Մեղրիի սահմանային անցակետի աշխատակազմի աշխատանքային պարտականությունների նկարագրությունները. մաքսային ծառայողների համար վերոնշյալ աշխատանքային պարտականությունների նկարագրությունները կարող են պատրաստվել՝ հիմք ընդունելով աշխատանքային պայմանագրերի՝ «իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն» մասը	Սահմանային անցակետի հետ կապված գործողությունների առավել լավ կառավարում	ՎՁԵԲ PR1 Կազմակերպական կարողություններ և հանձնառություններ	Ներքին ռեսուրսներ ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	2021թ. 3-րդ եռամսյակից 2021թ. 4-րդ եռամսյակ	Դերակատարությունները, լիազորություններն ու պարտականությունները սահմանված և փաստաթղթավորված են	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎՁԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
1.8	Սահմանել բնապահպանական, առողջապահական, անվտանգության և ապահովության կառավարման նվազագույն չափորոշիչները գնումների հրավերում և բնապահպանական, առողջապահական, անվտանգության և ապահովության մասով դրույթները ներառել կապալառուների հետ կնքվելիք պայմանագրերում	Կապալառուների՝ բնապահպանական և աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության հետ կապված գործողությունների առավել լավ կառավարում	ՎՁԵԲ PR1 Մատակարարման շղթայի կառավարում	Ներքին ռեսուրսներ ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	2020թ. 2-րդ եռամսյակից 2020թ. 3-րդ եռամսյակ	Կապալառուների՝ աշխատավայրում առողջության պահպանության և անվտանգության հետ կապված գործողությունները համահունչ են բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով պահանջներին: Դժբախտ պատահարներ տեղի չեն ունեցել	Բաց է
1.9	Ներդնել հրդեհային անվտանգության և բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով աուդիտի/մոնիտորինգի մեխանիզմ և ապահովել պատշաճ արձագանք բացերին և խախտումների վերացմանն ուղղված գործողություններին	Բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով պահանջներին անհամապատասխանության պատշաճ կառավարում	ՎՁԵԲ PR1 Ծրագրի մոնիտորինգ և հաշվետվությունների ներկայացում	Ներքին ռեսուրսներ ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	Ծրագրի մեկնարկից սկսած	Բնապահպանական, առողջապահական և անվտանգության և հրդեհային անվտանգության մասով ներքին աուդիտն իրականացված և փաստաթղթավորված է, խախտումների վերացմանն ուղղված գործողությունները կատարված են	Բաց է

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
1.10	Նախապատրաստել և պետական Վիճակագրական կոմիտե ներկայացնել տարեկան վիճակագրական զեկույցներ՝ մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին ՁՆ N 2-տա (օդ) և թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին ՁՆ N 1-թափոն (տարեկան)	Պետական իշխանության մարմինների կողմից տուգանքների ռիսկ	ՎԶԵԲ PR1 Ծրագրի մոնիտորինգ և հաշվետվությունների ներկայացում ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հրամաններ	Ներքին ռեսուրսներ ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	2020թ. սկսած	Օդային ավազան արտանետումների և գոյացած թափոնների քանակությունները հաշվարկված են և ներկայացված են համապատասխան պետական մարմիններին	Բաց է
1.11	ՎԶԵԲ-ին ներկայացնել շրջակա միջավայրի մոնիտորինգի տարեկան հաշվետվություններ, այդ թվում՝ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի իրականացման կարգավիճակի/առաջընթացի վերաբերյալ	Ծրագրի մոնիտորինգի ոչ պատշաճ իրականացման ռիսկ	ՎԶԵԲ PR1 Ծրագրի մոնիտորինգ և հաշվետվությունների ներկայացում	Ներքին ռեսուրսներ Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	Ծրագրի մեկնարկից սկսած	ՎԶԵԲ-ը տեղեկացված է Ծրագրի՝ բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով կատարողականի մասին և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի իրականացման կարգավիճակի մասին	Բաց է
PR2	**Աշխատանքային պայմաններ**						
2.1	Ընդունել Մարդկային ռեսուրսների	Կատարելագործված մարդկային	ՎԶԵԲ PR2	Սեփական	2022թ. 3-րդ	Մարդկային	Բաց է

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
	կորպորատիվ կառավարման քաղաքականություն, որը համահունչ կլինի ազգային աշխատանքային օրենսդրությանը և կապահովի հավասար հնարավորություններ, ներառյալ՝ միավորումների ազատության և կոլեկտիվ բանակցություններին մասնակցելու իրավունքը	ռեսուրսների կառավարում, աշխատողների և ՊԵԿ/ սահմանային անցակետի ղեկավարության միջև ոչ բավարար հարաբերությունների ռիսկի կրճատում	Մարդկային ռեսուրսների քաղաքականություններ և աշխատանքային հարաբերություններ	ռեսուրսներ ՊԵԿ-ի բարձր օղակի ղեկավարներ	եռամսյակից 2022թ. 4-րդ եռամսյակ	ռեսուրսների քաղաքականությունն ընդունված է և ներկայացված աշխատողներին: Վերջինիս իրականացման մոնիտորինգը կատարված է և փաստաթղթավորված	
2.2	Սահմանային անցակետի աշխատողների բողոքների մեխանիզմի ստեղծում և պահպանում	Աշխատողների և ՊԵԿ/սահմանային անցակետի ղեկավարության միջև տարաձայնություններից խուսափում	ՎԶԵԲ PR2 Բողոքների մեխանիզմ	Սեփական ռեսուրսներ ՊԵԿ-ի բարձր օղակի ղեկավարներ	2022թ. 3-րդ եռամսյակից 2022թ. 4-րդ եռամսյակ	Աշխատողների/ կապալառուների բողոքների մեխանիզմը ներդրված է և ներկայացված բոլոր աշխատողներին և կապալառուներին	Բաց է
PR3	**Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում և վերահսկողություն**						

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎՁԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
3.1	1) Հողի բերրի շերտի պահպանում՝ կանխելու շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը։ 2) Հողի բերրի շերտի հանման և պահպանման ընթացքում դրա որակական բնութագրերի վատթարացման կանխարգելում։ 3) Վերակառուցման աշխատանքների ավարտից հետո արդիականացված սահմանային անցակետի տարածքի բարելավում՝ հանված հողի բերրի շերտի միջոցով	Ռեսուրսների արդյունավետ օգտագործում, հողի աղտոտումից խուսափում	ՎՁԵԲ PR3 Ռեսուրսների արդյունավետություն ՀՀ կառավարության թիվ 1396-Ն որոշում	Շինարարական աշխատանքների կապալառու Ենթակա է ներառման կապալառուի բյուջեում Բնապահպանական, առողջապահական ու անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	Ծրագրի իրականացման ընթացքում	Պահպանված և վերաօգտագործված հողի բերրի շերտ	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
3.2	1) Հրավիրել մասնագիտացված կազմակերպություն՝ հաշվելու/մշակելու Մեղրիի սահմանային անցակետից դուրս եկող վտանգավոր նյութերի առավելագույն թույլատրելի արտանետումների նորմատիվները կամ մշակել այդ փաստաթուղթը սեփական ռեսուրսներով: 2) Մեղրիի սահմանային անցակետից դուրս եկող վտանգավոր նյութերի առավելագույն թույլատրելի արտանետումների նորմատիվները ներկայացնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ ստանալու անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակներ/ արտանետման թույլտվություն	Պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից տուգանքների ռիսկ	ՎԶԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Օդային ավազան արտանետումներ և հոտ ՀՀ օրենքը «Մթնոլորտային օդի պահպանության մասին»	Մասնագիտացված կապալառու 2000 եվրո Բնապահպանական, առողջապահական, անվտանգության և ապահովության հարցերով նշանակված մասնագետ	2020թ. 1-ին եռամսյակից 2020թ. 2-րդ եռամսյակ	Տրամադրված անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակներ/ արտանետման թույլտվություն	Բաց է
3.3	Տեղադրել կեղտաջրերի հավաքման և մաքրման նախագծված կայան: Ապահովել կեղտաջրերի մաքրման կայանի պատշաճ գործունեությունը՝ պահպանելու համար սահմանված բնապահպանական ազգային նորմերը	Պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից տուգանքների ռիսկ	ՎԶԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Կեղտաջրեր	Մասնագիտացված կապալառու Ենթակա է ներառման կապալառուի բյուջեում ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	Ծրագրի իրականացման ընթացքում	Կեղտաջրերը հավաքված և մաքրված են	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
3.4	1) Ներդնել արդի վառելիքի լիցքավորման համակարգ և այլ հարակից սարքավորումներ։ 2) Այն տարածքներում, որտեղ հնարավոր է վառելիքի/նավթի արտահոսք, ապահովել վառելիքի/նավթի համապատասխան հավաքման տարաներով և երկրորդային պահման տարաներով	Հողի աղտոտման ռիսկ	ՎԶԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Հողի աղտոտում	Մասնագիտացված կապալառու Ենթակա է ներառման կապալառուի բյուջեում ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	2023թ. 3-րդ եռամսյակից 2023թ. 4-րդ եռամսյակ	Հնարավոր արտահոսքի աղբյուրները մաքրված են, և հողի աղտոտումը կանխված է/նվազագույնին է հասցված։ Վառելիքի/նավթի հավաքման տարաները տեղադրված են	Բաց է
3.5	Մշակել թափոնների կանխարգելման և արձագանքման կարգ և գործնական վերապատրաստում անցկացնել հողերի աղտոտման ռիսկերի և վնասների վերաբերյալ այն աշխատողների հետ, ովքեր զբաղվում են վառելիք լցնելու գործողություններով, ինչպես նաև այն մասին, թե ինչպես արձագանքել նավթի արտահոսքին	Հողի աղտոտման ռիսկ	ՎԶԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Հողի աղտոտում	Սեփական ռեսուրսներ Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2021թ. 1-ին եռամսյակից 2021թ. 2-րդ եռամսյակ	Թափոնների կանխարգելման և արձագանքման կարգը մշակված է, և համապատասխան անձնակազմը վերապատրաստված է	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
3.6	1) Վերալիցքավորել մեքենաները լիցքավորման կայաններում: Հնարավորության դեպքում շինարարական սարքավորումները նույնպես պետք է վերալիցքավորվեն հարակից լիցքավորման կայաններում: Հակառակ դեպքում, տեղում սարքավորումները վառելիքով լիցքավորելու ժամանակ պետք է կիրառվեն հեղուկի արտահոսքի պաշտպանիչ տարաներ: 2) Շինարարության իրականացման տարածքը զինել արտակարգ իրավիճակների համար նախատեսված տարաներով, որոնց կազմում առկա են առնվազն թիակներ, սորբենտային պարկեր, բեռնարկղեր և այլն	Հողի աղտոտման ռիսկ	ՎԶԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Հողի աղտոտում	Սեփական ռեսուրսներ 1000 եվրո Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	Ծրագրի իրականացման ընթացքում	Վառելիքի արտահոսքը կանխված է/ նվազագույնին է հասցված	Բաց է
3.7	Աղտոտված հողը պահել հատուկ բեռնարկղերում և պարբերաբար հանձնել թափոնների վերամշակման կազմակերպություններին	Թափոնների պատշաճ հանձնում	ՎԶԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Թափոններ	Սեփական ռեսուրսներ 1000 եվրո Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	Ծրագրի իրականացման ընթացքում (ըստ անհրաժեշտության)	Ստորագրված պայմանագիր թափոնների վերամշակման մասնագիտացված կազմակերպության հետ	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
3.8	ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստանալ արտեզյան ջրերի հորատանցքի օգտագործման թույլտվություն	Պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից տուգանքների ռիսկ: Ջրերի պատշաճ օգտագործում	ՎԶԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Ջուր	Մասնագիտացված կապալառու 3000 եվրո Բնապահպանական, առողջապահական, անվտանգության և ապահովության հարցերով նշանակված մասնագետ	2020թ. 1-ին եռամսյակից 2020թ. 2-րդ եռամսյակ	Ջրերի օգտագործման տրամադրված թույլտվություն	Բաց է
3.9	1) Մեղրիի սահմանային անցակետում գոյացած թափոնները հաշվառել թափոնների ընդհանուր հաշվառման գրքում՝ համաձայն ՀՀ կառավարության «Թափոնների հաշվառման՝ գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասազերծման, տեղադրման) և օգտահանման կարգը սահմանելու մասին» թիվ 1343-Ն որոշման: 2) Մշակել Մեղրիի սահմանային անցակետում գոյացած վտանգավոր թափոնների համար անձնագրեր և դրանք ներկայացնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ հաստատման	Պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից տուգանքների ռիսկ: Թափոնների պատշաճ կառավարում	ՎԶԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Թափոններ ՀՀ կառավարության թիվ 1343-Ն որոշում և ՀՀ կառավարության թիվ 47-Ն որոշում	Սեփական ռեսուրսներ (մասնագիտացված կապալառու) 1000 եվրո Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2020թ. 1-ին եռամսյակից 2020թ. 2-րդ եռամսյակ	Վտանգավոր թափոնները հաշվառված են պետական հաշվառման գրքում, և վտանգավոր թափոնների անձնագրերը հաստատված են	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎՁԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
3.10	1) Ապահովել գոյացած թափոնների առանձին տարաներում հավաքումը և պատրաստել համապատասխան սարքավորումներ՝ թափոնների ապահով պահման համար: 2) Պայմանագիր կնքել վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա ստացած կազմակերպության հետ	Թափոնների արդյունավետ կառավարում	ՎՁԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Թափոններ ՀՀ օրենքը «Թափոնների մասին»	Սեփական ռեսուրսներ Բյուջեն պետք է հաշվարկվի՝ հիմնվելով թափոնների անձնագրերի վրա Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2020թ. 3-րդ եռամսյակից 2020թ. 4-րդ եռամսյակ	Կնքված պայմանագիր վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա ստացած կազմակերպության հետ	Բաց է
3.11	1) Նախատեսել առանձին տարաներ՝ շինարարության ընթացքում գոյացող թափոնների համար համապատասխան նշումներով: 2) Սև և գունավոր մետաղների կտորները փոխանցել մասնագիտացված և լիցենզավորված կազմակերպություններին	Թափոնների վերամշակում և վերաօգտագործում	ՎՁԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Թափոններ ՀՀ օրենքը «Թափոնների մասին»	Կապալառու Ենթակա է ներառման կապալառուի բյուջեում Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	Ծրագրի իրականացման ընթացքում	Թափոնների տարաները տեղադրված և նշագրված են, սև և գունավոր մետաղների վերամշակման կազմակերպության հետ պայմանագիրը կնքված է	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
3.12	Մեղրիի քաղաքային աղբավայրի շինարարական հատվածում գոյացած շինարարական և կենցաղային թափոնների պարբերական հավաքման և հանման համար հրավիրել թափոնների հավաքման քաղաքային ընկերություն	Թափոնների արդյունավետ կառավարում	ՎԶԵԲ PR3 Աղտոտման կանխարգելում և վերահսկողություն Թափոններ	Կապալառու Ենթակա է ներառման կապալառուի բյուջեում Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	Ծրագրի իրականացման ընթացքում	Թափոնների հավաքման քաղաքային ընկերության հետ կնքված պայմանագիր	Բաց է
PR4	**Առողջապահություն և անվտանգություն**						
4.1	1) Պարզել աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության հետ կապված հիմնական վտանգներն ու ռիսկերը, որոնք կարող են լինել կաթսայատան, դիզելային գեներատորի, Ռապիսկանի և այլ աշխատողների աշխատավայրերում: 2) Կաթսայատան, դիզելային գեներատորի, Ռապիսկանի և այլ աշխատողների համար մշակել աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության մասով ընթացակարգեր	Առավել անվտանգ աշխատանքային միջավայր և պայմաններ	ՎԶԵԲ PR4 Աշխատավայրում առողջության պահպանում և անվտանգություն ՀՀ աշխատանքային օրենսգիրք	Սեփական ռեսուրսներ Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2020թ. 1-ին եռամսյակից 2020թ. 3-րդ եռամսյակ	Աշխատավայրերը և աշխատանքային միջավայրը գնահատված են, և հիմնական ռիսկերը վերհանված են, աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության մասով ընթացակարգերը մշակված են	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎՁԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
4.2	1) Նոր աշխատակիցներին ներկայացնել աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության հիմնահարցերը: 2) Իրականացնել պարբերական իրազեկումներ աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության հիմնահարցերի վերաբերյալ (6 ամիսը մեկ անգամ) առնվազն կաթսայատան, դիզելային գեներատորի, Ռապիսկանի և այլ աշխատողների համար՝ հիմնվելով աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության մասով մշակված ընթացակարգերի վրա	Անվտանգ աշխատանքի իրականացման, աշխատավայրում ստացված վնասվածքների վերաբերյալ տեղեկատվության պակաս	ՎՁԵԲ PR4 Առողջապահության և անվտանգության կառավարման ընդհանուր պահանջներ ՀՀ աշխատանքային օրենսգիրք	Ներքին ռեսուրսներ Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2020թ. 1-ին եռամսյակից 2020թ. 3-րդ եռամսյակ	Աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության հարցերի վերաբերյալ վերապատրաստումների ն/տեղեկությունների ներկայացմանն աշխատակիցների մասնակցության վերաբերյալ գրառումներն առկա են	Բաց է

4.3	Անհրաժեշտ է իրականացնել գործողություններ՝ ապահովելու համար բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով կատարողականը Ծրագրի իրականացման ընթացքում, այդ թվում՝ 1) ապահովել աշխատակիցներին առաջին բժշկական օգնության պարագաներով, 2) ցուցումներ շինարարական մեքենաների վարորդներին՝ նախանշված ճանապարհների և արագության մասով համապատասխանության վերաբերյալ, 3) աշխատակիցների նախնական և պարբերական բուժզննում, 4) ժամանակավոր (շինարարական) աշխատողների համար սանիտարական պայմանների պատշաճ կառավարում, ներառյալ՝ ձեռքերի լվացման հարմարությունները և հանգստի սենյակները, 5) արտակարգ իրավիճակների մանրամասն պլանի մշակում՝ կրճատելու/վերացնելու դժբախտ պատահարներն ու աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության մասով մյուս ռիսկերը, 6) բոլոր աշխատակիցները պետք է ապահովված լինեն հավաստագրված անհատական և կոլեկտիվ պաշտպանական միջոցներով: Վնասվածքների դեպքում վնասված անձինք պետք է ստանան առաջին բուժօգնություն և անհրաժեշտության դեպքում պետք է տեղափոխվեն Մեղրիի բժշկական կենտրոն	Վնասվածքների, մահվան ելքով դժբախտ պատահարների ռիսկ Պատշաճ սանիտարական պայմաններ՝ կապալառու աշխատողների համար	ՎԶԵԲ PR4 Առողջապահության և անվտանգության կառավարման ընդհանուր պահանջներ	Շինարարության կապալառու Ենթակա է ներառման կապալառուի բյուջեում Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	Ծրագրի իրականացման ընթացքում	Ծրագրի իրականացման ընթացքում կապալառուի կողմից պահպանվել են բնապահպանական, առողջապահական և անվտանգության մասով պահանջները: Դժբախտ պատահարների ու վնասվածքների դեպքերը կանխվել են/նվազագույնին են հասցվել	Բաց է
4.4	1) Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես լավ պահպանված և պարբերաբար ստուգում անցնող	Ճանապարհային դժբախտ պատահարներ, վնասվածքներ, մահվան ելքով դժբախտ	ՎԶԵԲ PR4 Ճանապարհային հոսքի և ճանապարհի	Շինարարության կապալառու Ենթակա է	Ծրագրի իրականացման ընթացքում	Ճանապարհի անվտանգությունն ապահովված է, նախազգուշացնող	Բաց է

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎՁԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
	բեռնատարներ: 2) Իրականացնել Մեղրի համայնքի և սահմանային անցակետի միջև ընկած ճանապարհի տրանսպորտային հոսքի վերաբերյալ ուսումնասիրություն, կազմակերպել թափոնների և նյութերի տեղափոխումն օրվա ոչ բեռնված ժամերին: 3) Սահմանափակել Մեղրի համայնքի և սահմանային անցակետի միջև ընկած ճանապարհին բեռնատարների արագությունը շինարարության ընթացքում, տեղադրել համապատասխան նախազգուշացնող նշաններ	պատահարներ	անվտանգություն	ներառման կապալառուի բյուջեում Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ		նշանները տեղադրված են, ճանապարհային հոսքը պատշաճ ձևով կառավարվում է	
4.5	Գնահատել վնասատու և վնասակար ասպեկտների փաստացի մակարդակը (լուսավորություն, աղմուկ, վիբրացիա, ճառագայթում, միկրոմիջավայր և այլն) Մեղրիի սահմանային անցակետի աշխատավայրերում	Մասնագիտական հիվանդությունների ռիսկ	ՎՁԵԲ PR4 Հիվանդությունների նկատմամբ հակումներ ՀՀ կառավարության թիվ 756-Ն որոշում	Մասնագիտացված ընկերություն 6000 եվրո Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2023թ. 4-րդ եռամսյակից 2024թ. 1-ին եռամսյակ	Անվտանգ աշխատանքային միջավայր և պայմաններ	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
4.6	Մինչ աշխատանքի ընդունումը Ռապիսկան սարքավորման հետ աշխատող աշխատակիցների համար պահանջել նախնական բժշկական զննության եզրակացություններ	Մասնագիտական հիվանդությունների ռիսկ	ՎԶԵԲ PR4 Հիվանդությունների նկատմամբ հակումներ ՀՀ կառավարության թիվ 1089-Ն որոշում	Սեփական ռեսուրսներ Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2020թ. 1-ին եռամսյակ	Ռապիսկան սարքավորման հետ աշխատող օպերատորի աշխատանքի համար դիմորդների գնահատված մասնագիտական համապատասխանություն	Բաց է
4.7	Պարզել հնարավոր արտակարգ իրավիճակները (օրինակ հրդեհ, նշանակալի արտահոսքեր և այլն), որոնք կարող են առաջանալ սահմանային անցակետի հետ կապված գործողությունների հետևանքով, և պարբերաբար անցկացնել գործնական վարժանքներ՝ անձնակազմի՝ արտակարգ իրավիճակներին դիմակայելու կարողությունները բարձրացնելու համար	Արտակարգ իրավիճակների և պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից տուգանքների ռիսկ	ՎԶԵԲ PR4 Արտակարգ իրավիճակներին պատրաստվածություն և արձագանք	Սեփական ռեսուրսներ Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2021թ. 1-ին եռամսյակ	Արտակարգ իրավիճակների՝ նվազագույնին հասցված դեպքեր	Բաց է

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎԶԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
4.8	1) Ներգրավել մասնագիտացված կապալառու՝ ստուգելու առկա հակահիդեհային սարքավորումների կիրառելիությունն ու ամբողջականությունը (ներառյալ հրդեհաշիջման սարքերը), վերալիցքավորել և փորձարկել դրանք, անհրաժեշտության դեպքում տեղադրել լրացուցիչ սարքավորումներ: 2) Մշակել վարչական շենքերի (այդ թվում երկրորդ հարկի համար) և ամբողջ Մեղրիի սահմանային անցակետի տարածքի տարհանման պլաններ: Ծրագրի ավարտից հետո թարմացնել սահմանային անցակետի տարհանման պլանները	Պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից տուգանքների ռիսկ Հնարավոր վնասների և կյանքի համար ռիսկ	ՎԶԵԲ PR4 Արտակարգ իրավիճակներին պատրաստվածություն և արձագանք	Սեփական ռեսուրսներ Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2021թ. 1-ին եռամսյակ	Հրդեհաշիջման գործիքները փորձարկված, վերալիցքավորված, արդիականացված են: Տարհանման պլանները մշակված / թարմացված են և հասանելի են բոլոր հաստատություններում:	Բաց է
PR5	**Հողերի ձեռքբերում, հարկադիր վերաբնակեցում և տնտեսական տեղահանում.** ***որևէ գործողություն նախատեսված չէ***						
PR6	**Կենսաբազմազանություն և կենդանի բնական ռեսուրսներ**						
6.1	Ծրագրի տարածքում ստեղծել դենդրոպարկ, որտեղ հնարավոր կլինի վերարտադրել populus euphratica, և հետագայում այս էկոհամակարգը ընդլայնել նոր բույսերով Մեղրիի տարածաշրջանում, Արաքս գետի երկայնքով	Ազդեցություն էկոհամակարգի վրա (populus euphratica)	ՎԶԵԲ PR6 Կենսաբազմազանության պահպանում	Մասնագիտացված կապալառուներ Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	2023թ. 2-րդ կիսամյակ	Պահպանվում է «populus euphratica» էկոհամակարգը	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎՁԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
PR7	Բնիկ ժողովուրդ. *Ծրագրի նկատմամբ կիրառելի չէ*						
PR8	Մշակութային ժառանգություն						
8.1	Հողի հետ տարվող աշխատանքների ժամանակ մշակել և կիրառել «մշակութային արժեքների հնարավոր հայտնաբերման գործընթացի» սկզբունքը, գործընթացի մասին տեղեկացնել հողի հետ տարվող աշխատանքներում ներգրավված անձնակազմին	Պատահական հայտնաբերված արժեքների հնարավոր վնասում	ՎՁԵԲ PR6 Մշակութային ժառանգության վրա ազդեցությունների գնահատում և կառավարում	Սեփական միջոցներ/ Շինարարության կապալառու Բնապահպանական, առողջապահական և անվտանգության հարցերով նշանակված մասնագետ	Ծրագրի իրականացման ընթացքում	Ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր հայտնաբերված արժեքներ/հողի հետ տարվող պահպանված աշխատանքներ	Բաց է
PR10	Տեղեկությունների հրապարակում և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն						
10.1	Ստեղծել տեղեկատվական ուղիներ/գործիքներ՝ տեղեկությունները (ներառյալ Մեղրիի սահմանային անցակետին առնչվող բնապահպանական և սոցիալական հարցերի վերաբերյալ) Ծրագրի շահագրգիռ կողմերին տրամադրելու համար: Որպես տեղեկատվական գործիք կարող են կիրառվել ՊԵԿ-ի ինտերնետային կայքը, տարածաշրջանային զանգվածային լրատվամիջոցներն ու տեղեկատվական պաստառներ	Շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունների բարելավում	ՎՁԵԲ PR10 Շահագրգիռ կողմերի ներգրավում/ Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան	Սեփական ռեսուրսներ ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	Մինչև Ծրագրի մեկնարկը	Պաստառները փակցված են, ՊԵԿ-ի ինտերնետային կայքն ունի համապատասխան բաժին Ծրագրի համար	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

No.	Գործողություն	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ/օգուտներ)	(Օրենսդրական կարգավորում, ՎՁԵԲ PR, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումների մասով կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույց	Հաջող իրականացման համար թիրախային և գնահատման չափորոշիչներ	Կարգավիճակ/ մեկնաբանություններ
10.2	Մշակել և իրականացնել սահմանային անցակետում բողոքների կառավարման ընթացակարգ և այն հասանելի դարձնել շահագրգիռ կողմերին՝ տարբեր լեզուներով (հայերեն, անգլերեն և ռուսերեն) տեղեկատվական թերթիկների և բողոքների գրանցման ձևերի միջոցով, որոնք պետք է տեղադրված լինեն սահմանային անցակետի մուտքի մոտ, ինչպես նաև սահմանային անցակետի ամբողջ տարածքում	Շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունների բարելավում	ՎՁԵԲ PR10 Արտաքին շահագրգիռ կողմերի բողոքների մեխանիզմ	Սեփական ռեսուրսներ ՊԵԿ-ի համապատասխան աշխատակազմ	Մինչև Ծրագրի մեկնարկը	Բողոքների կառավարման ընթացակարգը մշակված և ներդրված է	Բաց է

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐԱԿ

Սրբագրված է՝ 24.02.2020

«Կառավարման» բառով կապակցությունները նայել ամբողջ տեքստում՝